

# Հայ գրականության հանրապետական օլիմպիադա 2019-2020 ուստարի

## Օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

### XI դասարան

1. Լևոն Շանթը միայն իրեն վերապահված յուրահատուկ տեղն ունի հայ մեծերի կողքին: Նա մեկն է այն Հայ Մեծն Երախտավորներից, ով ամբողջ կյանքում ծածանեց հայ մնալու դրոշմը և սրբորեն պահեց ու պահպանեց հայոց լեզվի հմայքն ու հրայրքը:

1909-ին քուբեշով հիվանդ պառկած Շանթը 40 օրում գրեց իր հանճարեղ «Հին աստվածներ» դրաման՝ հեղաշրջելով ողջ դրամատուրգիայի ու թատրոնի «կյանքը»: Այն լույս է տեսել Պոլսում 1912-ին, երբ արդեն հրապարակի վրա էին Մեծարենցի «Օրածանը» և Տերյանի «Մթնշաղի անուրջները»: 1913-ի հունվարին այն բեմադրվեց Թիֆլիսում Հայ դրամատիկական ընկերության կողմից և ուղղակի փոթորկեց գրական ու թատերական շրջանակները: Բուռն վեճերն ընթանում էին գլխավորապես գրական ստեղծագործության շուրջ, բայց ճշմարտություն էր, որ աննախադեպ հետաքրքրության շարժառիթը ներկայացումն էր: Վիճում էին դրամայի գրական ուղղության շուրջ՝ պատմական և թե խոհրդապաշտակա՞ն էր դրաման: Ինքը՝ Շանթը, հավաստել է, որ «Հագարամյակ մը մեզմե առաջ» անստույգ հղումը «սուկ արտաքին հենք է, ձև», որ իրեն լայն հնարավորություն էր տալիս ընդհանրացումների գնալ: Դրաման պատմական համարելու հիմնական կոմանդոն որոշ հերոսների պատմական նախատիպերի վկայակոչումն էր, խոսքը հատկապես վերաբերում էր Վանահոր նախատիպին՝ 9-րդ դարում ապրած Մաշտոց քահանային, որի մասին վկայում են Հայոց Հայրապետ Հովհաննես Դրասխանակերտցին, պատմիչ Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս վարդապետը: «Եւ շինեաց վանս և ժողովեաց եղբարս՝ կալով կրանաւորական կարգաւ»: Մաղաքիա Օրմանյանը, վկայակոչելով Ստեփանոս վարդապետին, նշում է, որ Մաշտոցը Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի կնոջ՝ Մարիամի առատաձեռնությամբ երկու «գեղապաճույճ եկեղեցիներ» կառուցեց Սևանա կղզում՝ սուրբ Առաքելոց և Սուրբ Աստվածածնի: Այսքանը բուն պատմականն է կամ հենց պատմությունը, որի հետավոր արձագանքները միայն կարելի է գտնել Շանթի դրամայում:

Դրաման խոհրդապաշտական համարողները իրավամբ հենվում են դրամայում առկա բազում խոհրդանիշների առկայության վրա, որոնց միջոցով Շանթը լուծում է երկրային կեցության հավերժական խնդիրների և մարդկային բնութագրող ձգտումների որոշակի կայունությունը:

«Հին աստվածներ»-ում աստվածության ձգտումը ամենատարբեր օրենքներից ու սահմանափակումներից ճնշված, կամա- ակամա ստեղծած հոգևոր ու մարմնավոր շղթաներից իսպառ հոգնած մարդկային անընդդիմադիր մղումն է դեպի նախաստեղծ ազատությունն ու վայելքները, դեպի անկաշկանդ ու աննախապաշարմունք աշխարհիկ կյանքը: Հին, հեթանոս աստվածները խոհրդանշում են հենց այդ կյանքը:

Ծովը խոհրդանշում է փոթորկուն կյանքը, ճերմակավորը Վանահոր անցյալի մարմնավորումն է, «կասկածի մարմնացումը», Իշխանը՝ «դուրսը հանդուգն եղողինն է աշխարհը»՝ ազատ, վայելքի ու ուժի մարմնացումը, Կույր Վանականը մերժվածն է, որ տակավին պայքարում է և անցյալը վերապրում ներքնատեսությամբ, Քողավորը սերն է՝ Մեղայի տեսիլքով, Միգանուշները խոհրդանշում են բնության երևույթները և նկատում, որ իրենց տեսնելու համար «նախ պետք էր սե՛ր»՝ «կարոտներ ու սպասումներ», նրանք ծովի դուստրերն են, Հովիկները՝ «թարմ ու թեթև պատանիների» տեսքով պար են բռնում Միգանուշների հետ, որը խոհրդանշում է կյանքի վայելքը՝ հիշեցնելով հեթանոսական տոնախմբություն: Ունայնության փոսը հերքում է ժխտման ոգու, հոռետեսության գոյության իրավունքը: Երագները՝ կյանքի երագներ են՝ դեմքեր, տերև, ծաղիկ, կայծեր, գույներ: Եկեղեցին թաքուն գոյատևած սիրո մարմնացումն է, ոչ թե հավատի:

Կենսականի հաստատմանը Շանթը գնում է երևակայական- պատրանքային պատկերների միջոցով, իսկ վերերկրայինն ու պատրանքայինը հերքվում են իրական հանգամանքներում:

2. Արյուն է եղել աշխարհում:՝ Եղել է եղեռն ու կոռիվ:  
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ:  
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,  
Ա՛րն է երզել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին:  
Եղիշե Չարենց

Իր հանճարեղ նախորդի՝ Սկյուտարի սոխակի նման Մեծարենցն էլ կյանքից հեռացավ սեր ու գարուն երգելով, իր նախորդի նման նա էլ խնդրում էր բարի արևին՝ կյանք տալ իրեն, բայց նրա նման էլ հեռացավ «հավելուլ երկնից», որպես երկնքում առկայծող աստղ:

Մենք չգիտենք իրականությունն է թե ոչ, բայց ժամանակակիցների և կենսագիրների հավաստմամբ Մեծարենցը սիրել է իրեն բուժող բժշկի նրբահյուս կնոջը՝ Օֆելյա ներկարարյանին, ում հետ սրտահույզ գրույցներ էր ունենում հիվանդ, հանճարեղ պատանին: Այդ գրույցների ու անհույս սպասման մի պահի քանդակն է «Վայրկյանը» բանաստեղծությունը: Նա իր սիրած կնոջ կերպարը հյուսել է հոգեկան խռովքի պահից, ծովի նման ծփացող հոգու կարոտաբաղձ ալիքների քնահաճ խաղից, ամեն մի թույլ շրջունից ու օձանելիքի բույրից ընդվզում է նրա տազնապած հոգին: Կարելի է կարդալ այդ անմեղ սիրո անցյալը. Պատանին տեսել է աղջկան ու վայրկենապես սիրահարվել, ամեն օր գիրքը ձեռքին սպասել է նրան՝ տեսնելու նարեկացիական քայլվածքը թիկնեթեկին, զգալու ծաղիկ նայվածքի քաղցրությունը: Ու երբ տեսնում է նրան կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար

Եվ ալիք մը թևը բացած կը վազե

Գրկել ավուներն իղձիս ոսկի ավազե:

Եվ այս հուզումնալից պահը, գեղեցկությունն ու քնքշությունը փոխակերպվում են հոգեկան մղումի, ու այդ մղումի ուժից սիրտը մթնշաղի բոցի կերպարանք է ստանում: Բանաստեղծությունը ունի անխառն մաքրություն, առանց մարմնականի, հավերժ երազային:

3. Ամենայն հայոց բանաստեղծը, Հայոց Պուշկինը, հմուտ, հանճարեղ լռեցին ճաշակեց հայ ժողովրդին բաժին ընկած ամենաանդարմանելի ողբերգությունը՝ հայոց Մեծ եղեռնը. Նա իր ժողովրդի զոհասեղանին դրեց ոչ միայն իր անպարփակ հանճարի ողջ գանձարանը, ոչ միայն իր սիրասուն զավակների կյանքը, այլև իր տոչորվող անձը՝ իր տիեզերական հոգու ողջ անընդգրկելի բարությանը ու նվիրումով: Թումանյանը կյանքի վերջին տարիներին ամբողջացրեց ու բյուրեղացրեց կյանքից ստացած տպավորությունները, աշխարհի մասին իր կենսափորձով ձեռք բերած փիլիսոփայությունը: Այս ամենի միաձուլումից ծնվում են հանճարեղ քառյակները:

«Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են», գրել է Թումանյանը: Հանճարեղ բնութագիր:

Քառյակը բանաստեղծության տեսակ է, որն ունի կայուն ծավալ(4 տող). այն խոհափիլիսոփայական բնույթի, ավարտուն ստեղծագործություն է՝ կյանքի գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկող: Քառյակը տարածված է եղել գլխավորապես Արևելքի միջնադարյան պոեզիայում: Հայ միջնադարյան գրականության մեջ քառյակն առաջին անգամ հանդիպում է Նահապետ Քուչակի, Գրիգորիս Աղթամարցու, 20-րդ դարում՝ Թումանյանի, Չարենցի, Շիրազի ստեղծագործություններում՝ հասնելով կատարելության: Քառյակը բանահյուսության մեջ անվանվել է խաղիկ, հայրեն:

Առկա են քառյակի հանգավորման տարբեր ձևեր. ամենատարածվածը 1,2,4 տողերի հանգավորումն է, իսկ 3-րդ տողը մնում է ազատ: Քառյակները ընտրի՛ր ինքդ և վերլուծի՛ր:

4. Հայ գրականության Վարպետը իրավամբ իշխում է թե՛ բանաստեղծության, թե՛ արձակի ոլորտներին. նրա գրիչը բեղմնավոր է գրական բոլոր ժանրերում: Իսահակյանի փիլիսոփայական արձակը հայ գրականության անզուգական էջերից է: Նրա պատմվածքները, արձակ պոեմները, լեգենդներն ու գրույցները բացահայտում են սիրո, կյանքի, մահվան, բնության առեղծվածները: Իսահակյանի պատմվածքներում արծարծվում են հավերժականի ու անցողիկի թեմաները, բարձր ոլորտներից նա խիզախորեն իջնում է ազգային-քաղաքական ու սոցիալական ոլորտներ, իջնում է ժողովրդական մտածողության խորքերը՝ վերհանելով նրա անսպառ հարստությունը: Իսահակյանի արձակի անկրկնելի էջերից են «Գարիբաղիականը», «Համբերանքի չիբուխը», «Անանդան և մահը», «Շաքրո Վալիշվիլի», անզուգական «Լիլիթն» ու «Մաադիի վերջին գարունը» և այլ շատ գործեր:

Վերոբերյալ միտքը «Մաադիի վերջին գարունը» ռոմանտիկական պատմվածքից է, որտեղ կենսասիրության հզոր ուժը սնվում է սիրուց, ուժ է ստանում բնությունից. կատարելության և հավերժության ձգտող 100-ամյա բանաստեղծը կյանքի մայրամուտին հաստատում է այն անբացատրելի ճշմարիտը, որը ոչ մի մահկանացու չի կարողացել մեկնել: Փիլիսոփայական խորքով այս հրաշալի քերթվածը ընթերցողին է փոխանցում տխրության մի լույս, և նա ակամայից խորհում է՝ գեղեցիկ ապրելու մասին, նա անսահման սիրում է կյանքը, վայելքները, կյանքից ստացել է և՛ դառնության ցմրուր

ճաշակած գավաթը, և՛ վայելքի խենթացնող նեկտարը, և՛ անթարգմանելի գոհողության հրայրքը: Բոլոր մարդիկ կյանքից հեռանում են մի անբացատրելի կարոտով՝ անկախ իրենց ապրած կյանքից, և սա է կյանքի անվերժանելի առեղծվածը:

**Հայ գրականության հանրապետական օլիմպիադա  
2019-2020 ուստարի  
Գնահատման չափանիշներ  
XI դասարան**

1. 1-ին հարց. 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ ենթահարցերը՝ 0,5-ական միավոր, 5-րդ ենթահարցը՝ 2մ.:

2-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարցը՝ 4 միավոր:

3-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 3մ., 2-րդ և 3-րդ ենթահարցերը՝ 1-ական միավոր:

4-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 1,5մ., 2-րդ ենթահարց՝ 0,5մ., 3-րդ ենթահարց՝ 3միավոր: